

Հաճախորդի անունը \_\_\_\_\_  
 Գործի համարը \_\_\_\_\_  
 ամսաթիվը \_\_\_\_\_  
 Վարչաշրջանը \_\_\_\_\_  
 Վարչաշրջանի հեռախոսահամարը \_\_\_\_\_

## **Ձեր CalWORKs գործի սկզբունքները փոխվել են:** **Խնդրում ենք կարդալ ուշադիր:**

\_\_\_\_\_ (ամսաթիվ) օրվանից սկսած՝ Ձեր CalWORKs գործը Տարեկան զեկույցից կփոխվի Կիսամյակային զեկույցի, քանի որ այժմ Ձեր գործը ներառում է օգնություն իրավունակ չափահաս անձի համար: Ըստ Կիսամյակային զեկույցի սկզբունքի՝ Ձեզնից պահանջվում է տարեկան մեկ անգամի փոխարեն տեղեկություններ հաղորդել երկու անգամ: Այդ զեկույցներից մեկը լինելու է Ձեր իրավունակության տարեկան վերանայման կամ վերավկայագրման ձևը (SAWS 2 PLUS): SAWS 2 PLUS ձևը լրացնելուց վեց ամիս անց փոստով Ձեզ կուղարկվի իրավունակության կարգավիճակի կիսամյակային զեկույց (SAR 7), որտեղ նշված կլինի ժամկետը: Ձեզնից չի պահանջվում զեկույցել, երբ ինչ-որ մեկը տեղափոխվում է Ձեր տուն կամ դուրս է գալիս տնից, քանի դեռ չի եկել հաջորդ զեկույցի ժամանակը (SAWS 2 PLUS կամ SAR 7): Եկամտի հայտարարման շեմի (IRT) սկզբունքները նույնն են Կիսամյակային զեկույցի շրջանակներում. երբ զեկույցում եք IRT-ն գերազանցող եկամտի մասին, վարչաշրջանը կարող է նվազեցնել կամ դադարեցնել Ձեր նպաստները:

Այս ծանուցումը պարունակում է մանրամասներ Կիսամյակային զեկույցի պահանջների վերաբերյալ: Հարցրեք Ձեր սոցիալական աշխատողին կամ զանգահարեք վարչաշրջան, եթե հարցեր ունեք ինչ և երբ զեկույցելու մասին:

Դուք առանձին ծանուցագիր կստանաք Ձեր CalFresh հաշվետվության պահանջներում կատարված փոփոխությունների մասին:

### **Չեկույցի սկզբունքները**

Ըստ Տարեկան զեկույցի սկզբունքի՝ ընդամենը պահանջվում է լրացնել նպաստների համար իրավունակության տարեկան վերանայման ձևը: Ըստ Կիսամյակային զեկույցի սկզբունքի՝ տարեկան վերանայման հետ միասին նաև պահանջվում է տարին մեկ անգամ ներկայացնել SAR 7 ձևը (Ձեր իրավունակության տարեկան վերանայումից 6 ամիս անց): SAR 7-ը Ձեզ կուղարկվի փոստով:

Ճիշտ ինչպես Տարեկան զեկույցի դեպքում, Դուք փոստով կստանաք տեսակցության նամակ, երբ զա Ձեր իրավունակությունը վերանայելու ժամանակը: Եթե չներկայանաք Ձեր իրավունակության վերանայման տեսակցությանը, և եթե այդ տեսակցությունը տեղի չունենա մինչև ամսվա վերջ, Ձեզ տրվող օգնությունը կդադարեցվի:

Օրինակ. մարտի 18-ին Դուք տեսակցության նամակ եք ստանում վարչաշրջանից, որտեղ ասվում է, որ Ձեր իրավունակության վերանայման տեսակցությունը նշանակված է ապրիլի 4-ին: Եթե չներկայանաք տեսակցությանը, և եթե այդ տեսակցությունը տեղի չունենա մինչև ապրիլի վերջ, ապա ապրիլի 30-ին Ձեր գործը կդադարեցվի:

---

---

## **Եկամտի հայտարարման շեմի (Income Reporting Threshold, IRT) սկզբունքները**

Եկամտի գումարը, որը պարտավոր եք հայտարարել 10 օրվա ընթացքում, նույնը կմնա Կիսամյակային զեկույցի շրջանակներում: Եթե Ձեր ընդհանուր ամսական եկամուտը գերազանցում է IRT գումարը, Դուք պարտավոր եք եկամտի մասին տվյալները 10 օրվա ընթացքում հայտնել Վարչական շրջանին: «Ընդհանուր ամսական եկամուտ» ասելով մենք հասկանում ենք ցանկացած փող, որը ստանում եք: Վարչաշրջանը կասի Ձեր IRT գումարի չափը: Ըստ Կիսամյակային զեկույցի սկզբունքի IRT-ն առաջվա պես հիմնված է Ձեր ընդհանուր եկամտի և Ձեր ընտանիքի անդամների թվի վրա: IRT գումարի գերազանցումը կարող է հանգեցնել Ձեր դրամական նպաստի նվազեցմանը կամ օգնության դադարեցմանը:

**Օրինակ.** Եթե Ձեր IRT-ն \$1000 է, իսկ եկամուտը կազմում է \$800, ապա չի պահանջվում զեկույցել փոփոխության մասին մինչև Ձեր հաջորդ զեկույցը (SAR 7 կամ SAWS 2 PLUS): Եթե Ձեր եկամուտը կազմում է \$1001 կամ ավելի, ապա պարտավոր եք 10 օրվա ընթացքում դա զեկույցել Ձեր սոցիալական աշխատողին: Եթե եկամուտը շարունակվի, Ձեր կանխիկ դրամական օգնության նպաստները կնվազեցվեն կամ կդադարեցվեն այդ մասին ծանուցելով 10 օր առաջ:

## **Պարտադիր զեկույցի սկզբունքները**

CalWORKs-ի պարտադիր զեկույցի սկզբունքները նույնն են Կիսամյակային զեկույցի և Տարեկան զեկույցի համար: Կիսամյակային զեկույցի սկզբունքներն ասում են, որ Դուք ՊԱՐՏՄԱՆԱԿԱՆ ԵՔ Բանավոր կամ գրավոր զեկույցել հետևյալ փոփոխությունների մասին, փոփոխությունից հետո 10 օրվա ընթացքում

- IRT-ն գերազանցող եկամուտը.
- հասցեի փոփոխությունները.
- փախուստի դիմած հանցագործի կարգավիճակը, կամ
- փորձաշրջանի կամ վաղաժամկետ ազատման պայմանների խախտումները:

## **Կամավոր զեկույցի սկզբունքները**

Կիսամյակային զեկույցի շրջանակներում որևէ փոփոխություն չկա CalWORKs-ի կամավոր զեկույցի սկզբունքներում: Դուք իրավունք ունեք կամավոր հաղորդելու ցանկացած տեղեկություն (օրինակ եկամտի նվազում կամ եկամուտ չունեցող որևէ անձի տեղափոխում Ձեր տուն), որը կարող է մեծացնել Ձեր դրամական նպաստի գումարը: Եթե կամավոր հաղորդեք որևէ տեղեկություն, որը կարող է հանգեցնել Ձեր դրամական նպաստի գումարի նվազեցմանը, վարչաշրջանը չի պակասեցնի Ձեր օգնությունը, մինչև այդ տեղեկությունը հաղորդեք Ձեր հաջորդ պարտադիր զեկույցի ժամանակ:

## **Welfare-to-Work ծրագրի հաշվետվության սկզբունքները**

Եթե ստանում եք Վելֆերից աշխատանք (Welfare-to-Work) ծառայություններ, պարտավոր եք շարունակել ներկայացնել վարչաշրջանի կողմից պահանջվող բոլոր մյուս հաշվետվությունները և ստուգումները: Անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր, որպեսզի շարունակեք ստանալ այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են երեխայի խնամքը, տրանսպորտը և գրքերի համար տրվող փողը: